




ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՏԷՐ, ԱՆՍԱՍԱՆ ՊԱՀԻՐ ԴՈՒ ՄԻՇՏ, ՔՈ ԻՍԿ ՀԻՄՆԱՏ
ՄԱՅՐ ԱԹՈՒ

Մայր Աթոռում հոկտեմբերի 3—8 օրերին հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ մթնոլորտում նշվեց Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձը:

Անցյալ 16 տարիները եղան լարված աշխատանքի, հոգևոր, մշակութային, շինարարական և հայրենամիտ գործունեության առողջ տարիներ, լի ոգևորիչ արդյունքներով՝ շնորհիվ Հայոց Հայրապետի հավատքի մեծության, գործելու եռանդի և Իր քարձր անձի ներշնչած տիրական հեղինակության: «Զի այսպիսի իսկ վայել էր մեզ Քահանայապետ» (Եբր. է 26):

Պատմական ու հիշարժան օրեր հանդիսացան այդ օրերը և խոստումնալից մի նոր հանգրվան Մայր Աթոռ ա. Էջմիածնի և նրա գահակալի եկեղեցաշեն ու հայրենամիտ հետագա գործունեության ճանապարհի վրա:

Հանձին Տ. Տ. Վազգեն Ա. Հայոց Հայրապետի, մենք ունեցանք մեր պատմության շինարար հայրապետներից մեկը, որն Իր ուսերի վրա է կրում հայրապետական ծանր և պատասխանատու լուծը կոչման և պարտքի խորին գիտակցությամբ դեպի իր եկեղեցին, ազգն ու հայրենիքը:

Ահա թե ինչու վերջին տարիների ընթացքում հայրապետական գահակալության տա-

րեդարձը դարձել է մեր օրերի ազգային-եկեղեցական տարեգրության մեջ գեղեցիկ ավանդույթ, երբ այդ ուրախ առիթով Մայր Աթոռում տեղի են ունենում հանդիսություններ, ազգային-եկեղեցական և եպիսկոպոսաց ժողովների գումարումներ, սրբալույս մեռոնի օրհնություն, հայ եկեղեցու, մեր մըշակույթի և հայոց աշխարհի պատմության հետ սերտորեն կապված դեմքերի և դեպքերի հոբելյաններ, ուխտագնացություններ:

Այս տարի էլ գահակալության տարեդարձի առիթով Մայր Աթոռում կատարվեցին հանդիսություններ, որոնց ներկա էին սփյուռքի զանազան գաղթօջախներից և ներքին թեմերից ժամանած քարձրաստիճան հոգևորական ու աշխարհական ուխտավորներ, հրավիրյալներ, ազգային-եկեղեցական մարմինների և մամուլի ներկայացուցիչներ:

Ուրախությամբ և մասնավոր կարևորությամբ պետք է արձանագրել այս տարի Հայոց Հայրապետի գահակալության բարեբաստիկ առիթով Հ. Բ. Ը. միության նախագահ տիար Ալեքս Մանուկյանի ժամանումը Մայր Աթոռ՝ ի գլուխ Ամերիկայի Միացյալ Նահանգների Հ. Բ. Ը. միության այլ ղեկավար անձնավորությունների պատվիրակության, մասնակցելու հանդիսություններին և անձամբ ողջունելու և շնորհավորելու Հա-

յոց Հայրապետին, որը 16 տարիներից ի վեր դարձել է բովանդակ հայ ժողովրդի սիրո և մտածումների կենտրոնը՝ իր արդյունաշատ գործունեությամբ:

Այսօր, ավելի քան երբևէ, կենսունակ, պայծառ է հավերժական Մայր Աթոռ և Էջմիածինը՝ իր հավատարմոր զավակների սիրուն և պաշտամունքին մեջ, որոնք իրենց հայվածքը և հոգին սևեռել են դեպի Էջմիածնի Կաթողիկե խորհուրդին: «Ձի օրէնք ի սուրբ Էջմիածնէ ելցեն»:

«Պատմական և բախտորոշ այս օրերին, — նշում է Հայոց Հայրապետը հոկտեմբերի 3-ին Մայր տաճարում արտասանած իր քարոզում, — Նոր կյանքի կոչվեց և գոյության մոր իմաստ ստացավ ման Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին...»

Այս 16 տարիների ընթացքում Մեր ճիգը և Մեր տեսիլքը եղավ վերաշինել Մայր Աթոռ և Էջմիածինը, իբրև սրբավայր, իբրև համազգային սրբավայր և իբրև պատմական մշտնջեն կոթող: Երկրորդ Մեր ճիգը և տեսիլքը եղավ և է՝ վերաշինել, պայծառացնել, իմաստավորել սուրբ Էջմիածինը, իբրև ոգեղեն կոթող մեր ժողովրդի զավակների գիտակցության մեջ, հոգու մեջ»:

Հոկտեմբերի 3-ին զահարահում ՀՍՍՀ Միևիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը, շնորհավորելով Հայոց Հայրապետի զահակալության 16-րդ տարեդարձը, նշում էր «այն մեծ աշխատանքը», որը Վեհափառ Հայրապետը կատարել է «անցյալ տարիների ընթացքում» և թե «սխալ կլիներ» Հայոց Հայրապետի «գործունեությունը շրջափակել միայն Էջմիածնով: Հենց առաջին տարվանից սկսած այն դուրս եկավ Էջմիածնի շրջանակներից, տարածվեց սփյուռքում, միջազգային նշանակություն ստացավ: Ես կուզեմայի մի առանձին ուժով ընդգծել այն ջանքերը, որ Դուք գործադրեցիք խաղաղության ամրապնդման ապարեզում, Ձեր խոսքով ու գործով... Ես ուրախ եմ ման նշելու, — ասում է պրն. Սարգիս Գասպարյանը, — որ մեր սփյուռքահայ ժողովրդի գոյատևման պայքարի մեջ Դուք որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, բերեցիք Ձեր նշանակալից աջակցությունը, Ձեր խոսքով, Ձեր ուղեկցություններով, Ձեր քարոզներով և Ձեր հեղինակությամբ»:

Արդարև, ավելի քան միսիարական, ոգեշնչող ու սրտառու է արձանագրել բովանդակ հայ ժողովրդի անվերապահ հավատարմությունը դեպի Լուսավորչի Աթոռը և նրա առաքելաշավիղ Աթոռակալը, որն իր մաքուր և ամուր ձեռքերում է պահում հայ եկեղեցու բարձրագույն ղեկավարությունը և

մեր ազգային-եկեղեցական կյանքի ղեկը:

Այս մտածումների լույսի տակ որքան ջերմ, իրավ ու հաշկական էր հնչում տիար Ալեքս Մանուկյանի վկայությունը, երբ հոկտեմբերի 3-ին, զահարահում շնորհավորելով Հայոց Հայրապետի տոնը, ասում էր.

«Ուրախության և երջանկության առիթներ ունեցած եմ կյանքիս ընթացքին, քայց այն ուրախությունն ու երջանկությունը որ կզգամ այսօր՝ բացառիկ է իր տեսակին մեջ և իր իմաստով: Այսօր կգտնվիմ իմ սեփական հայրենիքիս մեջ, իմ պապերուս դարավոր հողին վրա, և այդ հողին ամենեն սրբազան մեկ մասունքին, այդ հողին սիրտին՝ Էջմիածնի մեջ: Եվ այս մեծ բախտին համար՝ ես հոգևոր երախտապարտ եմ Աստուծո, և ման մեր անմահ ժողովուրդին, ինչպես ման Էջմիածնի անդուգական զահակալին՝ Վազգեն Առաջին Հայրապետին:

...Ու հիմա, կեցած սուրբ Էջմիածնի հովանիին ներքև, Հայաստանի հողին վրա՝ ես ինքզինքս կզգամ ավելի լի և ամբողջորեն հայ, ավելի հարազատորեն քրիստոնյա, ավելի մարդկայնորեն մարդ՝ քան հավանաբար երբևիցե իմ ամբողջ կյանքիս տևողության:

Սուրբ Էջմիածինը անհունորեն թանկագին է մեզի համար, ահա թե ինչու՝ հոգևոր ցանկացող ենք որ բարգավաճի ու գորանա ան, ու շարունակե ըլլալ մեր հոգիներն ու սիրտերը դեպի հայրենիք, դեպի Երևան քաշող և անոր կապող մագնիսական ուժը, որ շարունակե ջերմությունը և կորով սիրուն արտասանմանի հայ զանգվածներում հոգեկան կյանքեն ներս, և զանոնք կազդուրե, անոնց տոկունությունը ամրապնդե: Հայրենիքին իրականությունը և սուրբ Էջմիածնի հոգեպարար գոյությունը երկու գլխավոր կովաններն են, որոնցմով հզորացած՝ մենք մեզ կզգանք առնչված մարդկային պատմության և անոր ներկան կազմող ժամանակներուն: Հայրենիքին, և անոր գիրկին մեջ ծաղկող մեր հավատքին շնորհիվ է որ կղադրենք բեկորներ ու սոսկական համայնքներ ըլլալ, և կդառնանք ժողովուրդ: Անոնց շնորհիվ է որ կգտնենք անհրաժեշտ ուժն ու արիությունը տոկալու մեր անհայրենիք կյանքին դժվարություններուն և վառ պահելու մեր ինքնավստահությունն ու հավատքը»:

Տիար Ալեքս Մանուկյանի բերանով խոսում է համազգային մեծ ընտանիքը՝ Հ. Բ. Ը. միությունը, մույն ջերմությամբ և սիրով իր հավատարմությունն ու պաշտամունքը արտահայտելով մեր հավատքի կենտրոն Մայր Աթոռ և Էջմիածինը, նրա արժանընտիր զահակալը, և մեր վերածնված հայրենի հողը:

Այո, հայ հոգիների եղբայրացում, ս. էջ-միածնի լույսին և օրհնության ներքո, վերածնված մայր հողի վեմ-զգացման մեջ:

Ահա փրկության միակ և ճշմարիտ ճանապարհը, հայ հոգին ամբողջ ու անարատ պահելու համար սիյունքում ձուլման հզոր ալիքների դեմ:

Հայ ժողովուրդը այսօր իր լայն զանգվածներով թե՛ հայրենի հողի և թե՛ սիյունքի ամբողջ տարածքի վրա, այս ատողջ ու սրտատույզ հոգեբանության տեր է:

Ապացույցը՝ այն ցնծագին ոգևորությունը, ազգային հպարտությունը, որով միշտ նշվում է Հայոց Հայրապետի եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեության տոնախմբությունը, ամեն տարի ամենուրեք:

Հայ ժողովրդի հարգանքի և երախտագիտության առարկա է դառնում 16 տարիների վրա պատարագված Հայոց Հայրապետի լուսավոր կյանքը, որը ճշմարտապես եղավ պայծառ հավատքի, անդուլ աշխատանքի և ոգևորիչ իրագործումների մի շինարար ժամանակահատված:

Բովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն է, որ Լուսավորչի Աթոռը հավերժորեն միշտ պայծառ ու կանգուն մնա, Հայոց Հայրապետի կյանքի օրերը լինեն երկար ու արևոտ, նոր իրագործումներով գեղեցկացած և պայծառացած:

«Տէր, միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայս և պայծառացո գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետի»:

